# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«18» դեկտեմբերի 2024թ. N 27-Ա

### «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ՎԻՆԴՈՐԱՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության (Այսուհետև՝ ՔԿ ծառայություն) բոլոր քրեակատարողական հիմնարկների կարիքների համար 2025թ.-ի ընթացքում էլեկտրական սարքերի և սարքավորումների պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով, ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով՝ 14.11.2024թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-25/2» ծածկագրով գնման ընթացակարգ: «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-25/2» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 22.11.2024թ-ին ժամը 11:00-ին և նույն ժամին, www.armeps.am կայքի միջոցով, բացվել են Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը: Նշված գնման ընթացակարգին մասնակցել են թվով երեք մասնակիցներ՝ «Սևակ Մնացականյան» ԱՁ-ն, «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ն և «Վան Թարոյան Միքայելի» ԱՁ-ն:

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-25/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.11.2024թ.-ին ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչել «Վան Թարոյան Միքայելի» ԱՁ-ին:

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-25/2» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետը ավարտվել է 03.12.2024թ.-ին՝ 00:00 ժամին և անգործության ժամկետի ավարտից հետո՝ չորրորդ աշխատանքային օրը՝ 06.12.2024թ.-ին, «Վան Թարոյան Միքայելի» ԱՁ-ի էլեկտրոնային փոստին ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցում և կնքվելիք պայմանագրի նախագիծ, որպեսզի Հրավերով սահմանված ժամկետում՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, ՔԿ ծառայություն ներկայացվի որակավորման և պայմանագրի ապահովումները՝ Հրավերի հավելված 4.2 և հավելված 5.1 ձևերին համապատասխան (տուժանքի մասին համաձայնագրի ձևով), ինչպես նաև ներկայացնի իր կողմից ստորագրված՝ ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկների կարիքների համար 2025թ.-ի ընթացքում էլեկտրական սարքերի և սարքավորումների պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պայմանագիրը, իսկ Հրավերով սահմանված ժամկետը՝ 5 աշխատանքային օրն, ավարտվել է 16.12.2024թ.-ին Հրավերով սահմանված ժամկետում, «Վան Թարոյան Միքայելի» ԱՁ-ն, քրեակատարողական ծառայություն չի

ներկայացրել պայմանագրի, որակավորման ապահովումները և իր կողմից ստորագրված Պայմանագիրը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-25/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 2024 թվականի դեկտեմբերի 17-ին, ժամը՝ 15:00-ին հրավիրել է նիստ և որոշում է կայացրել՝ «Վան Թարոյան Միքայելի» ԱՁ-ին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի բ/ ենթակետի՝ «Վան Թարոյան Միքայելի» ԱՁ-ին պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-25/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված չի եղել հայտի ապահովում ներկայացնելու պահանջ.

**Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ՝**

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-25/2» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Վան Թարոյան Միքայելի» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև ներկայացվում է համապատասխան տեղեկատվությունն աղյուսակի տեսքով:

| Մասնակցի | | | | |
|---|---|---|---|---|
| Անվանումը | ՀՎՀՀ | Գործունեության հասցեն | Կնքված պայմանագրի միակողմանի լուծման իրավական հիմքը | Գնման ընթացակարգի ծածկագիրը |
| «Վան Թարոյան Միքայելի» ԱՁ | 49720391 | Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Մրգաշատ համայնք, 13 փող. 32 տուն | «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի բ/ ենթակետ. Որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց | «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-25/2» |

**ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ**